



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ԾԵՆՔԻՆ ՍԷՉ**

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՒԱՆԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՊՈՏՈՍԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՆԸ**

Հինգշաբթի, 22 Փետրուարը Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանի նորագոյն տարեգրութեանց մէջ արձանագրուեցաւ իբրեւ կրկնակիօրէն յիշատակելի թուական, այն առումով, որ այդ օրը, կեսօրին, Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանի ընկերակցութեամբ՝ Ազգային Առաջնորդարան այցելեց Երեւանի քաղաքապետ Երուանդ Չախարեան, հանդիսանալով առաջին պաշտօնական անձնաւորութիւնը, որ կ'այցելէ նորակառոյց շէնքը:

Ծանօթ է որ Տիար Ե. Չախարեան Լոս Անճելըս կը գտնուէր՝ Հայաստանի մայրաքաղաքին եւ Լոս Անճելըսի միջեւ քոյր քաղաքներու հռչակման համաձայնագիրին ստորագրման առիթով: Քաղաքապետին կ'ընկերանային իր գլխաւոր օգնականը՝ Վարդան Ամարեան, Երեւանի գլխաւոր ճարտարապետ Սամուէլ Դանիէլեան եւ քաղաքապետութեան առողջապահութեան բաժանմունքի գլխաւոր վարիչ Արմէն Սողոյեան: Գլխաւոր հիւպատոսին կ'ընկերանային գլխաւոր հիւպատոսի տեղակալ Յարութիւն Գոճոյեան եւ հիւպատոսարանի պաշտօնատարներէն Յակոբ Յովհաննիսեան:

Առաջնորդ Սրբազանը յարգելի հիւրերը դիմաւորեց Ազգային Առաջնորդարանի մուտքին, շրջապատուած՝ Թեմիս Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան, Տիկնանց Օժանդակ Մարմինին, հայկական կազմակերպութեանց ու միութեանց ներկայացուցիչներուն կողմէ: Հանդիպումը տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ: Ազգային Առաջնորդարանի ժողովականութեան ներկայացուցիչներուն կողքին՝ ներկայ էին Բ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի, Բ.Ս.Ը.Մ.ի ԲՕՄի, Համագգայինի Շրջ. Վարչութեանց, «Հայաստան» Հիմնադրամի, Հայկական Միացեալ Հիմնադրամի եւ այլ միութեանց ներկայացուցիչները, Կլէնտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Րաֆֆի Մանուկեան եւ գործարար ազգայիններ, որոնք գործակցական կապեր ունին Հայաստանի հետ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հայրենի հիւրերուն ներկայութիւնը եւ գոհունակութիւն յայտնեց, որ նորակառոյց շէնքին մէջ առաջին պաշտօնական ընդունելութիւնը կը տրուի Երեւանի քաղաքապետին ու Հայաստանի գլխաւոր հիւպատոսին, ինչ որ կ'արտայայտէ Առաջնորդարանիս ու Հայրենիքին միջեւ սերտ կապերու իրողութիւնը: Ան նաեւ նկատել տուաւ, որ այս հանդիպումին առիթով իր կողքին են մեր գաղութի հայկական կազմակերպութեանց ու միութեանց, ինչպէս

նաեւ Թեմի ժողովականութեան ներկայացուցիչները, պերճախօս ապացոյց մը, թէ Ազգային Առաջնորդարանը Ազգին Տունն է:

Տիար Ե. Չախարեան շնորհակալութիւն յայտնեց սիրալիր ընդունելութեան համար եւ ընդհանուր գիծերու մէջ բացատրեց Լոս Անճելըս իր առաքելութեան նպատակը, վերջին երկու օրերուն ամերիկեան ու հայկական շրջանակներու հետ ունեցած հանդիպումներուն բնոյթը եւ յաջորդ առաւօտուն, Լոս Անճելըսի քաղաքապետութեան մէջ նախատեսուած հանդիսութեան նպատակը: Ապա, ան ըստ բաւականին մանրամասնօրէն բացատրեց յատկապէս Երեւանի ու ընդհանրապէս Հայաստանի տնտեսական, քաղաքաշինական ու այլ մարզերու զարգացումներուն ընթացքը, նշելով, որ Երեւանի համար մշակուած է զարգացման յստակ ծրագիր, որ պիտի գործադրուի մինչեւ 2020 թուական: Ան անդրադարձաւ նաեւ հայրենի պետութեան ու ժողովուրդին դիմագրաւած զանազան դժուարութիւններուն, համոզում յայտնելով, որ ծրագրուած աշխատանքով ու հետեւողականութեամբ կարելի պիտի ըլլայ դարմանել դժուարութիւնները: Ան այս առիթով շնորհաւորանքի խօսք ուղղեց Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքին ամբողջացման համար ու բարի երթ մաղթեց ազգային այս հաստատութեան գործին:

Շնորհակալութեան ու բարեմաղթութեան արտայայտութեամբ խօսք առաւ նաեւ գլխաւոր հիւպատոսը, միաժամանակ մաղթելով, որ Երեւանի քաղաքապետին այս առաջին այցելութեան հետեւին այլ այցելութիւններ ու երկու երկիրներուն պետական կառոյցներուն ու ժողովուրդներուն միջեւ գործակցութիւնը ապրի դրական նոր զարգացումներ:

Փոխադարձ ծանօթացման պահէ մը ետք, հանդիպումին պաշտօնական բաժինը վերջ գտաւ հայրենի հիւրին յուշանուէրներու յանձնումով: Առաջնորդ Սրբազանը Տիար Ե. Չախարեանի նուիրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան փրկուած զանձերու մատենանէն օրինակ մը:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին, հիւրերն ու հիւրընկալները, իբրեւ մէկ ընտանիքի անդամներ, ունեցան մտերմիկ զրոյց: Վերջապէս, ներկաները այցելեցին Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի տարբեր բաժանմունքները եւ ծանօթացան Առաջնորդարանի առաքելութեան ու աշխատանքի մարզերու մանրամասնութիւններուն:

Սօտաւորապէս մէկ ու կէս ժամ տեսած այցելութիւնը վերջ գտաւ յաջողութեան փոխադարձ մաղթանքներով:

## **PRELATE WELCOMES YEREVAN MAYOR AND CONSUL GENERAL TO THE NEW PRELACY HEADQUARTERS**

On Thursday, February 22<sup>nd</sup>, Yerevan Mayor Yervant Zakharian, who is in Los Angeles for the inauguration of the Los Angeles-Yerevan Sister City program, visited the Western Prelacy becoming the first public official to visit the new headquarters.

The mayor was accompanied by Consul General Armen Liloyan, and aides Vartan Amaryan, Samuel Tanielian, and Armen Soghoyan. The Consul General was accompanied by Consul Haroutioun Khojoyan and Consulate staff member Hagop Hovannisian.

The reception took place at the Prelacy's "Dikran and Zarouhi Der Ghazarian" Hall, where the guest were greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Clergy, Executive Council, Ladies Auxiliary, representatives of the A.R.F. Central Committee, Homenetmen, A.R.S., Hamazkayin, Armenia Fund, United Armenia Fund, and Glendale city council member Rafi Manoukian.

The Prelate welcomed the guests and expressed gratitude that the first official guests at the new location were the mayor of Yerevan and the Consul General. Mayor Zakharian thanked the Prelate for the warm welcome and explained his mission in Los Angeles and the nature of the reception that was to take place on Friday morning at Los Angeles City Hall. The mayor also spoke in detail of the development taking place in Yerevan stressing that the project is scheduled to conclude in the year 2020. He concluded by expressing congratulatory remarks on the completion of the Prelacy building.

Remarks were also made by the Consul General who hoped that this would be the first of many visits for the mayor, and for collaboration between the officials and citizens of Los Angeles and Yerevan reach new heights.

At the conclusion of the official program, the Prelate presented Mayor Zakharian with the book "Rescued Treasures of Cilicia" after which the reception took place. During the reception, guests had the chance to tour the new building and become more closely familiarized with the endeavors of the Prelacy.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, Ca 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.

If you wish to be removed from [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) mailing list, please send email to: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) and asked to be removed.